ՊԱՀԵՍՏԱԶՕՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՒ ՊԱՀԵՍՏԱԶՕՐԱՅԻՆ ՈՒԺԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

տարբերակ՝ 1.3
էջերի քանակ՝ 25
ամսաթիւ՝ 8 օգոստոս, 2025

© 2025թ, ԱՌ Միաւորում, ՀՊԱՀԶ ՀԿ

Բովանդակութիւն

Փաստաթղթի մասին.....2

1. Ռազմավարական համահիւսը եւ պահեստազօրի համակարգի վերափոխման հրամայականը.....3

2. Հասարակութեան, պետութեան եւ պահեստազօրի միջեւ յարաբերութեան փոփոխութիւնը՝ Հայաստանի Համապարփակ Պաշտպանութեան եւ Անվտանգութեան Համակարգի շրջանակում.....7

3. Պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի կառուցուածքը, գործառոյթները եւ կարողութիւնները.....10

4. Խրախուսման համակարգ, անձնակազմի կառավարման միասնական համակարգ.....17

5. Պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի բարեփոխման առաջարկներ.....20

Փաստաթղթի մասին

Փաստաթուղթը Ոգեզէն համայնքի եւ ԱՌ Միաւորման աշխատանքային խմբի նախաձեռնած վերանայման արդիւնք է՝ նպատակ ունենալով փոփոխուող անվտանգութեան միջավայրում նորովի ձեւակերպել Հայաստանի ՀՊԱՀ համակարգի ներքոյ Պահեստազօրի համակարգի եւ Պահեստազօրային ուժերի հայեցակարգը:

Այս փաստաթղթի համար հիմք են ծառայել 2022 թուականին ձեւաւորուած, այնուհետեւ «Հորիզոններ» գրքում ամփոփուած ՀՊԱՀ սկզբունքները եւ հայեցակարգային մօտեցումները, ինչպէս նաեւ 2023 թուականին մշակուած Հայաստանի ՀՊԱՀ տեսլականը, որը հաստատուել է Անվտանգութեան խորհուրդի կողմից:

Պահեստազօրի համակարգի եւ Պահեստազօրային ուժերի զարգացման ազդեցութիւնը պէտք է գերազանցի զուտ պաշտպանական բնագաւառի բարեփոխումների շրջանակը՝ դառնալով փոխակերպման շարժիչ ուժ՝ միաւորելով հասարակութեան եւ պետութեան բոլոր բնագաւառները:

1. Ռազմավարական համահիւսը եւ պահեստազօրի համակարգի վերափոխման հրամայականը

1.1 Հայաստանի անվտանգութեան ապահովման նոր մօտեցում

Հայաստանի ձեւաւորած անվտանգութեան համակարգը անկարող եղաւ լայնածաւալ ռազմական դիմակայութիւն իրականացնել տարածաշրջանային ուժային կենտրոններ ներառող դաշինքի դէմ: Այդ դաշինքի կողմից ռազմական ուժի ցուցադրման կարողութիւնը հնարաւոր չէ չէզոքացնել միայն Հայաստանի պետութեան ռազմական ներուժով, ուստի անհրաժեշտ է զսպման ռազմավարութեան մշակումը՝ հիմնուած հայ ազգի անվտանգութեան եւ Հայաստանի համապարփակ պաշտպանութեան եւ անվտանգութեան համակարգի (ՀՊԱՀ) վրայ: Այս նոր մօտեցումը հիմնուած է յետխորհրդային ժամանակաշրջանի ազգային եւ ռազմական անվտանգութեան համակարգի հիմքից տարբերուող այլ հայեցակարգային, իմաստասիրական եւ համակարգային սկզբունքների վրայ:

Իրավիճակն էլ աւելի է բարդանում այն հանգամանքով, որ տեսանելի ապագայում Հայաստանը չի կարող ապաւինել ռազմական դաշինքներին եւ պէտք է նախատեսի իր անվտանգութեան համակարգի վերափոխումը՝ հիմնուելով բացառապէս սեփական ազգային կարողութիւնների վրայ: Բացի այդ, առաջիկայ տարիներին տարածաշրջանային անվտանգութեան միջավայրը կառաջնորդուի «գորշ գօտու» եւ տարասեռ պատերազմի տրամաբանութեամբ ու լեզուաբանութեամբ:

Այն երկրների փորձի ուսումնասիրութիւնը, որոնք հիմնել են իրենց պաշտպանական համակարգերը համապարփակ անվտանգութեան մօտեցմամբ, ցոյց է տալիս, որ Հայաստանի ՀՊԱՀ-ը ունակ է կանխարգելել տարածաշրջանային ուժային կենտրոնների կողմից ռազմական ուժի կիրառումը կամ դրա սպառնալիքը: Ռազմական յարձակման դէպքում այն ապահովում է համազգային դիմադրութեան կազմակերպման հիմք, հակառակորդին անընդունելի վնաս հասցնելու եւ վերջնականապէս նրան Հայաստանի տարածքից դուրս մղելու հնարաւորութիւն:

1.2 Պահեստազօրի համակարգի փոփոխուող դերն ու նշանակութիւնը

Հայաստանի ՀՊԱՀ-ի շրջանակում պահեստազօրի համակարգի դերը եւ նշանակութիւնը ՀՀ մարտական կարողութիւնների ապահովման գործում կտրուկ վերափոխման փուլում են: Եթե նախկինում պահեստազօրի համակարգը նախատեսուած էր որպէս համալրման աղբիւր՝ ըստ Գլխաւոր շտաբի պահանջի, ապա նոր ռազմավարական պայմաններում այս գործառոյթները պէտք է զգալի չափով ընդլայնուեն եւ լրացուեն գործուն ունակութիւններով, որոնք կը երաշխաւորեն առաջացած մարտավարական խնդիրների կատարումը: Ուշադրութեան կենտրոնում պէտք է լինի պահեստազօրի համակարգի զարգացումը, որը պէտք է ներառի նաեւ պահեստազօրային ուժերը:

Հաշուի առնելով Հայաստանի հնարաւորութիւնների սահմանափակումները կանոնաւոր զօրքերի քանակի եւ կարողութիւնների ընդլայնման հարցում՝ պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի կարեւորութիւնը զգալի չափով աճում է: Զօրամիաւորումների հրամանատարները եւ օպերատիւ մակարդակի ղեկավարները պէտք է պատրաստ լինեն ոչ միայն պահեստազօրայիններին կանոնաւոր ստորաբաժանումներին ինտեգրելու, այլ նաեւ իրենց տրամադրութեան տակ ստանալ պահեստազօրային ուժերից կազմուած ինքնուրոյն գումարտակներ, որոնց մարտական պատրաստութիւնը թոյլ կը տայ մարտական խնդիրներ կատարել:

Այս մօտեցումը պահանջում է պահեստազօրայինների վերապատրաստման եւ մարտական պատրաստութեան ներկայիս համակարգի արմատական վերանայում: Երկրորդ արցախեան ռազմարշաւը ցոյց տուեց, որ Հայաստանի պահեստազօրայինների մեծ մասը ոչ միայն բարդ մարտական գործողութիւնների համար անհրաժեշտ հմտութիւնների չէր տիրապէտում, այլ անգամ տարրական զինավարժական պատրաստութիւն չուներ:

Բացի այդ, ժամանակակից սպառազինութեան բարդութիւնն ու պատերազմների նոր տիրոյթների զարգացումը պահանջում են, որ պահեստազօրայինները ունենան գրեթէ նոյն մակարդակի պատրաստութիւն, ինչ կանոնաւոր զօրքերը: Հրթիռային համակարգերի, թռչող սարքերի սպասարկման մասնագէտները, ինչպէս նաեւ տեխնոլոգիական եւ հեռահաղորդակցութեան ոլորտի մասնագէտները պէտք է պատրաստ լինեն անմիջապէս գործողութեան անցնելու՝ առանց լրացուցիչ վերապատրաստման: Անհրաժեշտ է Հայաստանի պահեստազօրի համակարգում ապահովել տեխնիկական մասնագէտների, բուժանձնակազմի եւ այլ կենսական օժանդակ ստորաբաժանումների մարտական պատրաստութեան բաւարար մակարդակ:

1.3 Պահեստազօրի համակարգի թերութիւնները

Հայաստանի պահեստազօրի համակարգում առկայ են մի շարք կառուցուածքային թերութիւններ, որոնք խիստ սահմանափակում են դրա արդիւնաւէտութիւնը: Դրանք պէտք է վերանայուեն նոր շրջանակում.

1. Հայաստանի ներկայիս պահեստազօրի համակարգը կառուցուած է այն ենթադրութեամբ, որ թշնամու ուժերի եւ ռեսուրսների նկատմամբ եթե ոչ համաչափութեան, ապա համադրելիութեան կարելի է հասնել: Ներկայ պայմաններում այդպիսի համաչափութիւնը անհասանելի է, եւ անվտանգութեան համակարգը պէտք է հենուի ասիմետրիկ մօտեցումների վրայ: Պահեստազօրի վերափոխուած համակարգը, որպէս ՀՊԱՀ-ի անբաժան բաղադրիչ, պիտի ապահովի ասիմետրիայի կիրառումը:

2. Ժամանակակից պատերազմներում զինուած ուժերի մարտունակութեան պահպանման համար անհրաժեշտ է բազմաբնոյթ եւ փոփոխուող հմտութիւնների եւ կարողութիւնների համալիր: Այդպիսի մասնագէտների պատրաստումը միայն ռազմական կրթական համակարգով բարդ խնդիր է անգամ մեծ ու հզօր պետութիւնների համար: Շատ երկրներում որպէս լուծում դիտարկուում է

պահեստազօրային ուժերի օգտագործումը որպէս մարտունակ զօրքի այլընտրանքային եւ դինամիկ աղբիւր, որի հետեւանքով նաեւ վերասահմանուում է պահեստազօրային ուժերի դերն ու նշանակութիւնը:

3. Հայաստանի պահեստազօրի համակարգը կառուցուած է քանակական տրամաբանութեամբ, ինչը հանգեցրել է անձնական բնոյթի կորստի եւ անհատականացման պակասի: Այս պահին ՊՆ-ի անձնակազմի կառավարման համակարգը հետեւում է միայն ընդհանուր ցուցանիշների՝ առանց անհատական զարգացման, հմտութիւնների ձեռքբերման ու մարտունակութեան գնահատման: Այս մօտեցումը ժառանգուած է Խորհրդային Միութեան ռազմական վարդապետութիւնից եւ անթոյլատրելի է ժամանակակից մարտական պատրաստութեան պայմաններում:

Արդիւնքում այս համակարգը հնարաւորութիւն չի տալիս իրավիճակային կառավարում կազմակերպել՝ հաշուի առնելով իւրաքանչիւր պահեստազօրայինի սոցիալական կարգավիճակը, մասնագիտական առաջընթացը կամ նոր հմտութիւնների եւ կարողութիւնների ձեռքբերումը, որոնք կարող են կենսական նշանակութիւն ունենալ ազգային պաշտպանութեան համար: «Չհաշուառուած պահեստազօրային» գաղափարն անթոյլատրելի շքեղութիւն է Հայաստանի համար: Անհրաժեշտ է արմատապէս վերաիմաստաւորել իւրաքանչիւր պահեստազօրայինի դերն ու տեղը թե կանոնաւոր զինուած ուժերում, թե օժանդակ ստորաբաժանումներում, թե պահեստազօրի համակարգում:

Ժամանակակից ՏՀՏ հնարաւորութիւնները թոյլ են տալիս մշակել տեղեկատուական հարթակներ, որոնք հետեւում են իւրաքանչիւր պահեստազօրայինի ծառայութեան ողջ ընթացքին՝ նախազօրակոչային տարիքից մինչեւ թոշակի անցնելը: Այդ համակարգում իւրաքանչիւր հայ զինծառայող եւ պահեստազօրային պէտք է ունենայ յստակ դեր, պատասխանատուութիւն, հասկանայ իր գործառոյթը, ինչպէս նաեւ կրի պատասխանատուութիւն՝ անձնական մարտունակութեան մակարդակի պահպանման համար:

1.4 Պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի նոր կառուցուածքը

Պահեստազօրի նոր համակարգը՝ ներառեալ պահեստազօրային ուժերը, զօրահաւաքի պայմաններում աջակցում է կանոնաւոր ԶՈՒ մարտունակութեանը, բայց միաժամանակ ունակ է իրականացնել զսպման ռազմավարութեան բաղադրիչ գործառոյթներ:

ՀՊԱՀ-ը պէտք է ապահովի կանոնաւոր ուժերի եւ պահեստազօրի ինտեգրման զարգացումը՝ ուղղուած ամբողջական համակցուած ուժի ձեւաւորմանը: Հարկաւոր է զարգացնել տարածքային պաշտպանութեան մոդելը եւ հասարակական միաւորումները եւ հարթակները, որոնք հնարաւորութիւն կը տան առաւել արդիւնաւէտ օգտագործել պահեստազօրայինների հմտութիւնները, կարողութիւնները եւ փորձը:

Պահեստազօրի նոր համակարգը պահեստազօրայինին կընկալի ոչ թե որպէս պասիւ ռեսուրս, այլ որպէս քաղաքացի, որը գիտակցաբար ստանձնում է երկրի պաշտպանութեան պարտականութիւնը: Համակարգը կապահովի այդ պարտականութիւնն իրագործելու համար տարբեր եղանակներ, ներառեալ՝

- ոգեշնչման բարձրացում՝ երկրի պաշտպանութեան եւ զինուած ուժերի մարտունակութեան մէջ նշանակալի մասնակցութիւն ունենալու հնարաւորութեան շնորհիւ,
- առաւել ազատ ընտրութիւն, թե ինչպէս է պահեսազօրայինը իր հմտութիւնները տրամադրում ՀՊԱՀ-ին,
- համապարփակ ֆիզիկական եւ վերիրային ենթակառուցուածք՝ ներառեալ կրթական եւ վարժական կենտրոններ, որոնք համապատասխանում են պահեստազօրայինների պահանջներին ու հնարաւորութիւններին,
- քաղաքացիական հմտութիւնների եւ մասնագիտական կարողութիւնների ընդլայնուած կիրառում ՀՊԱՀ-ում եւ Զինուած ուժերում,
- խթաններ, որոնք կը խրախուսեն պահեստազօրայիններին ստանձնելու այնպիսի պարտականութիւններ, որոնք այժմ հիմնականում կատարուում են զինծառայողների կողմից:

Համապատասխանաբար, նոր պահեստազորի համակարգը եւ պահեստային ուժերը ապահովում են՝

- զօրահաւաքի եւ կանոնաւոր ստորաբաժանումների տեղակայման ընթացքում լրացուցիչ ուժերի ձեւաւորման հնարաւորութիւններ,
- մասնագիտական ներուժի ներգրաւման հնարաւորութիւն, որոնց շարունակական ծառայութիւնը զինուած ուժերում տնտեսական առումով ոչ արդիւնաւէտ է:
- զինուած ուժերի թուաքանակի արագ աւելացման հնարաւորութիւն՝ պահեստազօրի համակարգի և պահեստազօրային ուժերի նոր կառուցուածքի շնորհիւ:

Այս համակարգի տեղակայումը ենթադրում է՝

- օրէնսդրական փոփոխութիւններ՝ պահեստազօրայինների նոր դասակարգում ներմուծելու եւ պահեստազօրային ուժերի տեսակների և պաշտպանութիւնն ու անվտանգութիւնն ապահովող պետական հաստատութիւնների միջեւ անցումները առաւել հասանելի եւ պարզեցուած դարձնելու համար,
- զինուած ուժերի և պահեստազօրայինների թուաքանակի նպատակային ցուցանիշների վերանայում՝ ընդլայնելով կարողութիւնները Հայաստանի ռազմական ծրագրերի մշակման գործում,
- բիւջէտային ռազմավարութեան վերանայում պաշտպանական ծախսերի ընդլայնմամբ՝ ուղղուած պահեստազօրի համակարգի և պահեստազօրային ուժերի զարգացմանը:

Այնպիսի պահեստազօրի համակարգի ձեւաւորումը, որը ունակ կը լինի իրագործել վերոնշեալը, բարդ եւ բազմաբաղադրիչ խնդիր է: Սակայն, առանց ՀՊԱՀ շրջանակում այդ համակարգի զարգացման Հայաստանը անկարող կը լինի ապահովել պետութեան եւ հասարակութեան ռազմական եւ ազգային անվտանգութիւնը: Փոփոխուող անվտանգութեան միջավայրում առկայ սպառնալիքներին հակազդելու համար նախատեսուած պահեստազօրի համակարգը եւ պահեստազօրային ուժերը կառուցուում են հետեւեալ հիմնարար սկզբունքների վրայ՝

- պահեստազօրի համակարգի, հասարակութեան եւ հայ ազգի փոխյարաբերութեան վերահիմաստաւորում,
- պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի դերի ընդլայնում՝ թե զինուորական գործի, թե քաղաքացիական կեանքում,
- այնպիսի պայմանների ստեղծում, որոնք հնարաւորութիւն կը տան պահեստազօրայինին լիարժէք իրացնել իր ներուժը,
- պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի նկատմամբ ընկալման փոփոխութիւն՝ թե հասարակական, թե ազգային մակարդակում:

2. Հասարակութեան, պետութեան եւ պահեստազօրի միջեւ յարաբերութեան փոփոխութիւնը՝ Հայաստանի Համապարփակ Պաշտպանութեան եւ Անվտանգութեան Համակարգի շրջանակում

ՀՊԱՀ-ի շրջանակում պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի զարգացման համար անհրաժեշտ է լիարժէք ներգրաւել պահեստազօրայինների մասնագիտական կարողութիւնները, հմտութիւնները եւ փորձառութիւնը՝ այդ կերպ ամրապնդելով պետական եւ հասարակական դիմակայունութիւնը: Սա իր հերթին բարձրացնում է պահանջները պահեստազօրայինների, գործատուների, հասարակական կազմակերպութիւնների, կրթական համակարգի ու գիտակրթական միջավայրի, պետական հաստատութիւնների եւ եկեղեցու նկատմամբ՝ պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի ձեւաւորումը դարձնելով համազգային նախաձեռնութիւն:

Պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի կայուն հիմքի հաստատման համար պետական կառոյցներում, այդ թուում նաեւ մշակութային դաշտում, անհրաժեշտ են խորքային փոփոխութիւններ: Պետութիւնը պարտաւոր է վերանայել իր վերաբերմունքը պահեստազօրայինների նկատմամբ եւ ապահովել բարելաւուած պայմաններ՝ պահեստազօրային ծառայութիւնը խրախուսելու եւ այն որպէս պատուաբեր եւ գրաւիչ պետական եւ հասարակական գործունէութիւն ներկայացնելու համար:

Փոփոխութիւնները կը վերաբերուեն նաեւ հասարակական, մասնաւոր եւ պետական ոլորտների փոխյարաբերութիւններին, որոնց ճշգրիտ ներդաշնակեցումը անհրաժեշտ ներուժ կը ստեղծի պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի լիարժէք գործունէութեան համար: Դա իր հերթին կը խորացնի փոխազդեցութիւնը հասարակութեան

եւ պաշտպանական ոլորտի միջեւ՝ նպաստելով Հայաստանի պաշտպանական կարողութիւնների եւ ազգային դիմակայունութեան ամրապնդմանը: Ի վերջոյ, պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի ազդեցութիւնը հայկական հասարակութեան եւ պետութեան վրայ կը գերազանցի զուտ պաշտպանական բնագաւառի բարեփոխումների շրջանակը՝ դառնալով փոխակերպող գործօն հայ ժողովրդի եւ պետութեան զարգացման բոլոր բնագաւառներում:

2.1 Հասարակութիւնը

ՀՊԱՀ-ի շրջանակում Հայաստանի դիմակայունութեան բարձրացման եւ թշնամու յարձակումների յուսալի զսպման կարողութիւնների ապահովման համար պահանջուում է որակական նոր մակարդակի համագործակցութիւն պետութեան, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական եւ մասնաւոր ոլորտների, Եկեղեցու եւ ողջ հայ ազգի տարբեր շերտերի միջեւ: Այնուամենայնիւ, նման համագործակցութիւն նախաձեռնելու համար կառավարութեան հնարաւորութիւնները սահմանափակուում են մի շարք գործօններով, այդ թուում՝

- կառավարման անարդիւնաւէտութիւն եւ գործառոյթների կրկնութիւն պետական համակարգում,
- սահմանափակ վերահսկողութիւն ռազմավարական նշանակութեան ռեսուրսների, կենսական ենթակառուցուածքների եւ մասնաւոր ոլորտի նկատմամբ,
- քաղաքացիների շրջանում իրազեկութեան պակաս՝ ՀՊԱՀ-ի եւ պահեստազօրի համակարգում իրենց դերի եւ տեղի վերաբերեալ:

ՀՊԱՀ-ում հասարակական, քաղաքացիական եւ ռազմական կառավարման համակարգերը պէտք է համաձայնեցնեն իրենց գործողութիւնները, եւ պատասխանատուութիւններն ու գործառոյթները բաշխեն պետական համակարգի եւ հասարակութեան միջեւ, այլ ոչ թե կենտրոնանան բացառապէս պաշտպանութեան և անվտանգութեան համար պատասխանատու պետական հաստատութիւնների շրջանակներում:

Այս տեսակէտից, պահեստազօրի համակարգը եւ պահեստազօրային ուժերը ունեն երկակի եւ իւրայատուկ բնոյթ՝ մի կողմից, դրանք խորը ներառուած են հասարակութեան մէջ, քանի որ պահեստազօրայինները ապրում եւ աշխատում են իրենց համայնքներում, իսկ միւս կողմից՝ դրանք պաշտպանութեան եւ անվտանգութեան համակարգի կենսական բաղադրիչ են: Նոր համակարգի շրջանակում պահեստազօրայինները կարող են ծառայել որպէս մշակութային կամուրջ՝ ճգնաժամերին եւ յարձակումներին արձագանքելու քաղաքացիական և ռազմական մեխանիզմների համադրման գործում:

2.2 Պետութիւնը

ՀՊԱՀ ներդրման շրջանակում, հենուելով դիմակայունութեան ապահովման ընդլայնուած մօտեցման վրա, Հայաստանի կառավարութիւնը հնարաւորութիւն է ստանում օգտագործել պահեստազօրի համակարգը ու պահեստազօրային ուժերը՝ պետական, մասնաւոր եւ

հասարակական ոլորտների ջանքերը համադրելու եւ ինտեգրելու նպատակով: Միեւնոյն ժամանակ, կառավարութիւնը պարտաւոր համակարգել միջոլորտային խորհրդակցութիւններ՝ ճգնաժամի կամ պատերազմի դէպքում պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի զօրահաւաքի եւ ռազմական կարողութիւնների ընդլայնման ուղիները սահմանելու համար:

2.3 Հասարակական, մասնաւոր, գիտակրթական եւ պետական ոլորտներ

ՀՊԱՀ գաղափարախօսութեան զարգացմամբ Հայաստանում ձեւաւորւում է ռազմական անվտանգութեան աւելի բարդ համակարգ, որտեղ Զինուած ուժերի առկայ կառուցուածքը լրացւում է տարածքային պաշտպանութեան ուժերով, պահեստազօրային եւ այլ ուժերով՝ ձեւաւորելով հաւասարակշռուած եւ համակցուած ամբողջական ուժեր: ՀՊԱՀ-ի շրջանակում ձեւաւորուող համակցուած ամբողջական ուժերը հնարաւորութիւն են տալիս բազմազանել պաշտպանական խնդիրները, թոյլ տալով Հայաստանի կանոնաւոր զինուած ուժերին կենտրոնանալ կենսական նշանակութեան մարտական խնդիրների լուծման վրայ՝ առանց շեղուելու այն խնդիրների վրայ, որոնք կարող են ստանձնել պահեստազօրային եւ այլ ուժերը:

Գիտութիւն եւ կրթութիւն. Պահեստազօրի համակարգը եւ պահեստազօրային ուժերը նախատեսում են համագործակցութեան հաստատում կրթական համակարգի եւ համալսարանների հետ՝ ակադեմիական դաշտի կադրային ներուժի հիման վրայ մասնագիտացուած պահեստազօրային ստորաբաժանումների ստեղծման նպատակով: Համալսարանները կարող են մասնակցել ՀՊԱՀ-ի կառուցման գործընթացին եւ այս համագործակցութեան շնորհիւ օգտուել իրական միջավայրում հետազօտութիւններ եւ փորձարկումներ իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներից:

2.4 Հասարակական, մասնաւոր եւ պետական ոլորտների ինտեգրման տեսլականը

Հայաստանի զինուած ուժերի միացեալ հրամանատարութեան կառուցուածքի ներդրումը կը պահանջի զգալի ջանք եւ ի վերջոյ կը յանգեցնի մշակութային փոփոխութեան՝ եւ հայկական պետութեան, եւ ազգային մակարդակում: Առանց այդ մշակութային փոփոխութեան՝ անկարելի կը լինի ազգային անվտանգութեան համապարփակ մօտեցման ամբողջական իրագործումը՝ ազգային, պետական եւ համայնքային մակարդակներում:

Կանոնաւոր եւ պահեստազօրային ուժերի, տարածքային պաշտպանութեան ուժերի (ներառեալ տեղական պաշտպանական բաղադրիչների) միջեւ արդիւնաւէտ հաւասարակշռութեան ապահովումը մարտահրաւէրի միայն մի մասն է, անհրաժեշտ է նաեւ պետական ու հասարակական կառոյցների ներդաշնակ փոխգործակցութիւն: Պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի զարգացման համար անհրաժեշտ է պետական, հասարակական եւ մասնաւոր ոլորտների միջեւ գործընկերութեան խորացում՝ ներառեալ բարձր որակաւորում ունեցող մասնագէտների ներգրաւումը եւ գործատուների համար խթանների ստեղծումը:

ՀՊԱՀ-ի շրջանակում պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի մշակումն եւ ներդրումը կը մեծացնի պահեստազօրայինների դերը Հայաստանի դիմակայունութեան ապահովման մէջ եւ կը պահանջի պահեստազօրայինների ներգրաւման պաշտօնականացում՝ քաղաքացիական-ռազմական համագործակցութեան համակարգում: Այս գործընթացը կը նպաստի նաեւ տարածքային պաշտպանութեան ամրապնդմանը, ռազմավարական կառոյցների պաշտպանութեան յուսալիութեան բարձրացմանը եւ կենսական ենթակառուցուածքի անվտանգութեան ամրապնդմանը՝ պահեստազօրի ամբողջ ներուժի օգտագործման միջոցով:

Հայաստանի պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի վերափոխումը պահանջում է միասնական շրջանակի եւ վարդապետութեան մշակում, ինչպէս նաեւ բարեփոխումների գործընթացը կառավարող յատուկ տեղայնացուած կենտրոնի ստեղծում: Այդ կենտրոնը պէտք է զերծ լինի քաղաքական ազդեցութիւններից եւ ներառի ներկայացուցիչներ հասարակական եւ մասնաւոր ոլորտներից՝ ապահովելով գործընթացի կայունութիւնն ու շարունակականութիւնը: ՀՊԱՀ-ի, նոր պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի բարեփոխումները կը ծաւալուեն մի քանի քաղաքական շրջափուլերի ընթացքում եւ պէտք է յուսալի կերպով պաշտպանուած լինեն կարճաժամկէտ կուսակցական շահերից:

3. Պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի կառուցուածքը, գործառոյթները եւ կարողութիւնները

Հայաստանի նկատմամբ շարունակական բնոյթ կրող ռազմական սպառնալիքները պահանջում են պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի դերի ընդլայնում ազգային պաշտպանական ռազմավարութեան շրջանակում: Պահեստազօրի համակարգը եւ պահեստազօրային ուժերը պէտք է դուրս գան Զինուած Ուժերի համալրման եւ մարտական ներուժի մեծացման համար զուտ օժանդակ կառոյց լինելու սահմաններից եւ դառնան Հայաստանի պաշտպանական ճարտարապետութեան գործուն բաղադրիչ եւ ստանձնեն աւելի լայն գործառոյթներ: Օրինակ՝ ժամանակակից պատերազմի պայմաններում կարեւորուում է հասարակական եւ մասնաւոր ոլորտներում առկայ հմտութիւնների, կարողութիւնների եւ մասնագիտական համայնքների հասանելիութեան ընդլայնումը: Պահեստազօրայինները կարող են դառնալ նոր հնարաւորութիւնների եւ պատերազմի կերպերի կրողներ աւանդական կարծրացած ռազմական անվտանգութեան համակարգերում:

Հայաստանի ռազմական համակարգին վստահուած խնդիրների ծաւալի եւ բարդութեան կտրուկ աճը պահանջում է պահեստազօրի գործառոյթների ակտիւ զարգացում եւ պահեստազօրային ուժերի ինտեգրում պաշտպանութեան ամենօրեայ գործառոյթներում, այդ թուում՝

- պահեստազօրայինների կարճաժամկէտ ներգրաւում՝ ճարտարագիտական բարդ զինատեսակների սպասարկման եւ շահագործման գործում, ինչպիսիք են

կառավարման բազմամակարդակ համակարգերը, հրթիռային կայանները, հակաօդային պաշտպանութեան եւ թուային պատերազմների լուծումները եւ անօդաչու թռչող սարքերը:

- պահեստազօրային ստորաբաժանումների ստեղծում, որոնք իրենց ամենօրեայ պարտականութիւնների շրջանակում եւ ազատ ժամանակ աջակցում են թուային անվտանգութեան, տեղեկատուական եւ հոգեբանական պատերազմներին դիմակայելու խնդիրների լուծմանը:
- տարածքային պաշտպանութեան ուժերի ներգրաւում տարածքային պաշտպանութեան համակարգի շրջանակում՝ մարտական խնդիրների կատարման նպատակով, ընդհուպ մինչեւ կարճաժամկէտ մարտական հերթապահութիւնը:

Այս ընդլայնուած դերը լիարժէք ստանձնելու համար Հայաստանի պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի կառուցուածքը պէտք է փոխուի: Այդ փոփոխութիւնը ենթադրում է կանոնաւոր ուժերի համալրման աւանդական գործառոյթի ընդլայնում նոր պահեստազօրային բաղադրիչներով՝

- Համալրման պահեստազօր. ծառայում է կանոնաւոր ուժերի համալրմանը,
- Օպերատիւ պահեստազօր. պահեստազօրային ստորաբաժանումներ ինչպէս նաեւ բարձր պատրաստութեան վիճակում գտնուող ուժեր՝ անյապաղ տեղակայման համար,
- Ռազմավարական պահեստազօր. նախատեսուած է ազգային դիմակայունութեան ամրապնդման համար՝ համախմբելով այն հատուածները, որոնք դեռ ներառուած չեն պաշտօնական պահեստազօրի համակարգում:

Բոլոր երեք բաղադրիչներում պահեստազօրի համակարգը եւ պահեստազօրային ուժերը ներառում են նաեւ գործառութային բաղադրիչներ, այդ թուում՝ Տարածքային պաշտպանութեան համակարգում գործող Տեղական պաշտպանական ուժեր եւ արդի պատերազմների եւ բարդ զինտեխնիկայի շահագործման համար նախատեսուած պահեստազօրային ստորաբաժանումներ:

3.1 Համալրման Պահեստազօրը

Չնայած, որ համալրման պահեստազօրի հիմնական գործառոյթը մնում է Զինուած ուժերի եւ ազգային անվտանգութեան համակարգի ստորաբաժանումների համալրումը, այն կարող է ընդլայնել իր դերը եւ կիրառուել պաշտպանական ոլորտի ամենօրեայ միջոցառումների եւ նախագծերի իրականացման աջակցման համար: Այդ համատեքստում կարելի է նշել հետեւեալ գործառոյթներն ու հնարաւորութիւնները.

- Հայաստանի պաշտպանութեան գործում մասնակցելու պատրաստակամութիւն ցուցաբերող անձանց միջոցով ապահովել հասանելիութիւն հասարակական եւ մասնաւոր ոլորտների հմտութիւններին, կարողութիւններին, փորձառութեանը եւ մասնագիտական համայնքներին:

- Ներգրաւել ոլորտային քաղաքացիական մասնագիտացուած փորձագիտական ներուժ, օրինակ՝ ճարտարագիտութիւն, թուային անվտանգութիւն, տեղեկատուական կամ բժշկական կարողութիւններ եւ այլն:
- Պաշտպանութեան ոլորտում կարճաժամկէտ թափուր հաստիքների համալրում: Սա կը բարձրացնի մարդկային ներուժի կառավարման կայունութիւնը, որն այլապէս կը պահանջի գործող կազմի վերաբաշխում՝ բացեր առաջացնելով այլ ուղղութիւններում:

3.2 Օպերատիւ պահեստազօրը

Ռազմական սպառնալիքների ծաւալի եւ իրավիճակի սրութեան պայմաններում Հայաստանի կանոնաւոր ուժերը հարկադրուած են լինելու մարտական գործողութիւնների իրականացման համար առաւելապէս ապաւինել պահեստազօրին: Սա ենթադրում է, որ որոշ մարտական կարողութիւններ պէտք է փոխանցուեն կանոնաւոր ուժերից պահեստազօրային ուժերին, իսկ այդ փոխանցման արդիւնաւէտութիւնը կախուած է մի շարք առանցքային գործօններից:

Առաջին հերթին կարեւորուում է պահեստազօրի համակարգի կարողութիւնը՝ ապահովելու պահեստազօրային ուժերի մարտական պատրաստութեան անհրաժեշտ մակարդակը, որպէսզի վերջիններս կարողանան մոբիլիզացուել ժամանակին եւ կատարել առաջադրանքները ըստ ծրագրի: Մարտունակութեան անհրաժեշտ մակարդակի պահպանումը՝ յատկապէս ստորաբաժանման մակարդակով համընդհանուր կարողութիւնների տեսանկիւնից, առանձնապէս բարդ խնդիր է: Ժամանակակից զինատեսակներն ու ռազմական ճարտարագիտական լուծումները պահանջում են երկարատեւ ուսուցում եւ վարժանք, ինչպէս նաեւ զգալի միջոցներ՝ պահպանման եւ շահագործման համար:

Բարձր պատրաստութեան մակարդակի ապահովման համար անհրաժեշտ են այնպիսի մասնագիտական հմտութիւններ եւ հրամանատարական կատարողականութիւն, որոնք պահեստազօրայինների սահմանափակ ազատ ժամանակի պայմաններում միշտ չէ, որ հնարաւոր է ուսուցանել:

Այս խնդիրների լուծման պատասխանատուութիւնը կարող է ստանձնել օպերատիւ պահեստազորը, որը ենթադրում է բարձր մակարդակի մարտական պատրաստութիւն ոչ միայն անհատ պահեստազօրայինների, այլեւ պահեստազօրային ստորաբաժանումների համար: Օպերատիւ պահեստազօրի իւրաքանչիւր ստորաբաժանման չափը եւ մարտական գործառոյթները վճռորոշ գործօններ են պահեստազօրի համակարգի՝ մոբիլիզացիայի եւ պատերազմի պայմաններում անհրաժեշտ մարտական արդիւնաւէտութեան մակարդակին հասնելու կարողութիւնը գնահատելիս:

Պահեստազօրային ուժերը կունենան ինքնուրոյն կառուցուածք եւ կը գործեն աշխարհագրական ուղղութիւններով: Պահեստազօրային ստորաբաժանումները պէտք է ձեւաւորուեն բրիգադային եւ գումարտակային մակարդակներում:

Պահեստազօրային ուժերը կունենան առանձին զինտեխնիկայ եւ հրամանատարական կառուցուածք, եւ կը գործեն Զինուած ուժերի ընդհանուր համակարգում: Երեւանաբնակ պահեստազօրային ուժերը կունենան առանձնայատուկ դերակատարում՝ հաշուի առնելով Հայաստանի ժողովրդագրական կառուցուածքը:

Պահեստազօրային ուժերի կառուցուածքում կը ներառուեն նաեւ տարածքային պաշտպանութեան ուժերը: Ընդհանուր հրամանատարութիւնն ու ղեկավարումը կիրականացուի պահեստազօրային ուժերի եւ տարածքային պաշտպանութեան ուժերի հրամանատարութեան միջոցով՝ Գլխաւոր շտաբի ենթակայութեամբ:

Ակտիւ պահեստազօր. Այն պահեստազօրային ստորաբաժանումները, որոնք ունեն մարտական պատրաստութեան բարձր մակարդակ եւ կարող են գործել կանոնաւոր ուժերի, յատուկ գործողութիւնների ուժերի եւ այլ ստորաբաժանումների հետ համատեղ, յատուկ կարգավիճակով կը համարուեն Ակտիւ պահեստազօր: Սա կը դառնայ Հայաստանի պահեստազօրի համակարգի կարեւոր բաղադրիչը:

Հաշուի առնելով նաեւ այն հանգամանքը, որ պահեստազօրի համակարգում որոշ պահեստազօրայիններ տարբեր պատճառներով չեն կարող զօրակոչուել, Ակտիւ պահեստազօրի ստորաբաժանումները պէտք է նախօրօք պատրաստեն աւելի մեծ քանակով պահեստազօրայիններ՝ տեղակայման պահին անհրաժեշտ անձնակազմի երաշխաւորման նպատակով:

3.3 Ռազմավարական պահեստազօրը

Հայաստանի նկատմամբ սպառնալիքների բնոյթի, ծաւալի եւ շարունակականութեան փոփոխուող պայմաններում անհրաժեշտ է ձեւաւորել ռազմավարական պահեստազօր՝ կազմուած այն անձանցից, ովքեր պատրաստ են ծառայել որպէս պահեստազօրայիններ, սակայն չունեն պահեստազօրի համակարգի շրջանակում պաշտօնապէս սահմանուած իրաւական պարտաւորութիւններ: Այլ կերպ ասած, ռազմավարական պահեստազօրի զգալի մասը կազմուած կը լինի կամաւորներից, որոնք կունենան համեմատաբար ցածր մարտական պատրաստութիւն եւ պատրաստութիւն:

Ռազմավարական պահեստազօրն առանցքային դեր ունի հայ հասարակութեան եւ ազգի դիմակայունութեան ամրապնդման գործում: Օրինակ՝ ռազմավարական պահեստազօրի անդամները կարող են արտակարգ իրավիճակների կամ պատերազմի ժամանակ կամաւոր կերպով մասնակցել տարածքային պաշտպանութեանը:

Ռազմավարական պահեստազօրի մասնակցութիւնը կարող է դառնալ անհատների խրախուսման եւ քաղաքացիական ներգրաւման ուղի՝

- իրենց հմտութիւնները եւ փորձը ներդնել պահեստազօրում,
- կամաւոր ներգրաւուել ճգնաժամերի կամ զինուած հակամարտութիւնների ժամանակ,
- երիտասարդ պահեստազօրայինների եւ նորակոչիկների համար ծառայել որպէս խորհրդատու:

3.4 Ճարտարագիտական ոլորտի դերը Հայաստանի պահեստազօրի համակարգում

Ժամանակակից զինտեխնիկայի կարողութիւնները լիարժէք օգտագործելու եւ նոր տեսակի պատերազմներում արդիւնաւէտ գործելու համար Հայաստանի պահեստազօրի համակարգը պէտք է ձեւաւորի մասնագիտացուած պահեստազօրային ստորաբաժանումներ՝ համալրուած ճարտարագիտական ոլորտի մասնագէտներով եւ փորձագէտներով: Այս ստորաբաժանումները պէտք է կարողանան լուծել մարտական բնոյթի խնդիրներ, այդ թուում՝ թուային համակարգերի շահագործում, պաշտպանութիւն եւ յարձակում, ինչպէս նաեւ գործողութիւններ թուային եւ էլեկտրամագնիսական դաշտերում: Նման ստորաբաժանումները կարող են ներգրաւուել նաեւ ռազմական կապի եւ ազդանշանային ցանցային համակարգերի պաշտպանութեան գործում, հակառակորդի ցանցերի խափանման գործում, հետախուզական տեղեկութեան հաւաքագրման գործում: Մասնագիտացուած ստորաբաժանումները կարող են նաեւ բարձրացնել Հայաստանի կարողութիւնները՝ էլեկտրոնային պատերազմի, անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) եւ հրթիռային համակարգերի ոլորտներում:

Պահեստազօրի համակարգը պէտք է նաեւ նախապատրաստի, տեղակայի եւ զինի յատուկ նպատակով գործող պահեստազօրային ստորաբաժանումներ, օրինակ՝ կարճ հեռահարութեան հակաօդային համակարգերով: Կանոնաւոր ուժերի գործողութիւնների հետ համադրուած այս օդային պաշտպանական ստորաբաժանումները կարող են խափանել հակառակորդի կողմից օդային գերակշռութեան հասնելու փորձերը եւ խիստ բարդացնել հայկական օդային տարածքի նկատմամբ վերահսկողութեան հաստատումը:

Հաշուի առնելով այս գործողութիւնների բարդութիւնը՝ նման մասնագիտացուած պահեստազօրային ստորաբաժանումները պէտք է անցնեն ոչ աւանդական եւ առաւել յաճախակի ուսումնական շրջափուլեր՝ տեխնիկական ունակութիւնների պահպանման եւ արագ փոխուող օպերատիւ միջավայրում պատրաստութեան ապահովման նպատակով:

3.5 Պահեստազօրային ուժերի հրամանատարութիւնը

Պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի ընդլայնուած դերն ու գործառոյթները պահանջում են պահեստազօրային ուժերի հրամանատարութեան ձեւաւորում՝ Գլխաւոր շտաբի ենթակայութեամբ: Հաշուի առնելով, որ Թուրքիան ունի ժամանակակից զինատեսակներ, որոնք նախատեսուած են նախազգուշացման ժամկէտը նուազագոյնի հասցնելու համար, Հայաստանը պէտք է ունենայ ճգնաժամի կամ նախապատերազմական փուլում պահեստազօրային ուժերն արագ զօրահաւաքելու կարողութիւն՝ պաշտօնական հրամանից յետոյ ոչ ուշ քան 24 ժամուայ ընթացքում: Սա պահանջում է զօրահաւաքի ծրագրման եւ իրագործման նկատմամբ որակապէս խստացուած մօտեցում:

Խաղաղ ժամանակ պահեստազօրային ուժերի հրամանատարութեան հիմնական գործառոյթներից է ազգային, տարածքային եւ տեղական մակարդակներում զօրահաւաքային ծրագրերի մշակումն ու վաւերացումը: Պահեստազօրային ուժերի հրամանատարութիւնը պատասխանատու է Հայաստանի զօրահաւաքային ներուժի

ծրագրման, վերահսկման, գնահատման եւ հաւաստագրման համար: Հանրային կառավարման բոլոր մակարդակների՝ կենտրոնականից մինչեւ տեղական, ինչպէս նաեւ մասնաւոր եւ հասարակական հատուածների բոլոր բաղադրիչները պարտաւոր են ունենալ եւ պարբերաբար թարմացնել իրենց համապատասխան զօրահաւաքային ծրագրերը, որոնց վերահսկումը եւ գնահատումը ազգային մակարդակում իրականացուում է տեսչական այցերի եւ վարժանքի միջոցով՝ պահեստազօրային ուժերի հրամանատարութեան կողմից:

Պահեստազօրային ուժերի հրամանատարութիւնն ապահովում է նաեւ Հայաստանի պաշտպանական զօրահաւաքային կարողութիւնների ծրագրման, ստուգման, գնահատման և հաւաստագրման համար՝ ներառեալ պաշտպանական արդիւնաբերական հզօրութիւնները, կենսական ազգային ենթակառուցուածքը եւ ռազմավարական նշանակութեան ընկերութիւնները: Այն նախատեսում է նաեւ երկակի օգտագործման միջոցների եւ ենթակառուցուածքի հնարաւոր առգրաւման գործընթացները:

Ռազմական գործողութիւններին աջակցելու նպատակով քաղաքացիական միջոցների հաւաքագրումը մնում է Հայաստանի կառավարութեան պատասխանատուութեան շրջանակում, սակայն իրականացուում է պահեստազօրային ուժերի հրամանատարութեան համակարգմամբ եւ ցուցումով: Իւրաքանչիւր նախարարութիւն եւ կառավարութեան մարմին կատարում է իր համար սահմանուած գործառոյթները, իսկ դրանց յստակեցումը զօրահաւաքային ազգային շրջանակում մնում է զօրահաւաքային ծրագրերի առանցքային պահանջ:

Խաղաղ ժամանակ պահեստազօրային ուժերի հրամանատարութիւնը իրականացնում է պահեստազօրի համակարգի կառավարում, պահեստազօրային ուժերի կազմակերպում, ուսուցում եւ վարժանք, պահեստազօրայինների վերապատրաստում՝ հիմնական զինուորական հմտութիւնների պահպանման, նոր եւ նորացուած զինատեսակների ուսուցման եւ արագ տեղակայման պատրաստութեան ապահովման նպատակով: Հրամանատարութիւնը, արտակարգ զօրահաւաքի դէպքում, իրականացնում է նաեւ նախապատերազմական արագացուած ուսուցում:

Հայաստանի պաշտպանութեան պլանաւորման հիմնական կանխադրոյթն այն է, որ հնարաւոր ներխուժման դէպքում երկիրը կարող է ունենալ առավելագոյնը չորս շաբաթ նախազգուշացման ժամանակահատուած: Սա պարտադրում է տարածքային ռազմական հետախուզութեան կարողութիւնների էական զարգացում՝ ներառեալ բաց աղբիւրների հիման վրայ իրականացուող եւ էլեկտրոնային հետախուզութիւնը: Պահեստազօրային ուժերի հրամանատարութիւնը պարտաւոր է այդ ժամանակամիջոցն օգտագործել՝ զօրահաւաքային միջոցառումներ սկսելու, երկիրը նախապատերազմական կամ պատերազմական ռեժիմի բերելու եւ պահեստազօրայիններին մարտական գործողութիւնների նախապատրաստելու նպատակով:

Պատերազմի ժամանակ պահեստազօրային ուժերի հրամանատարութիւնը, համալրման պահեստազօրի կառավարման գործընթացից զատ, պատասխանատու է պահեստազօրային ստորաբաժանումների, այդ թուում մասնագիտացուած միաւորների, զօրահաւաքի, կազմաւորման եւ դրանց Գլխաւոր շտաբին ու օպերատիւ հրամանատարութիւններին տրամադրման համար:

Այսպիսով՝ Հայաստանում զօրահաւաքը պէտք է դիտարկուի ոչ միայն որպէս ռազմական ներուժի ակտիւացում, այլ որպէս համազգային պաշտպանութեան գործընթաց: Բացի պահեստազօրային ուժերի, տարածքային պաշտպանութեան ստորաբաժանումների ռազմական զօրահաւաքի հարցերից, պահեստազօրային ուժերի հրամանատարութիւնը նախապատրաստական աշխատանքներ է իրականացնում պաշտպանական ռազմավարական եւ արդիւնաբերական օբյեկտների եւ կազմակերպութիւնների, կենսական ազգային ենթակառուցուածքների մոբիլիզացիայի համար:

Պահեստազօրային ուժերի հրամանատարութեան ենթակայութեան տակ կարող են գտնուել հետեւեալ պահեստազօրայիններ եւ պահեստազօրային ստորաբաժանումներ՝ կախուած հաստիքներից, ստորաբաժանման տեսակից, սպառազինութիւնից եւ պատրաստութեան չափանիշներից՝

- օպերատիւ պահեստազօրային ստորաբաժանումներ եւ պահեստազօրայիններ՝ լեռնահրաձգային վաշտերից եւ գումարտակներից, որոնք մշտապէս ունեն բարձր պատրաստութեան մակարդակ,
- նուազագոյն պատրաստութիւն ունեցող ստորաբաժանումներ եւ պահեստազօրայիններ՝ ներառեալ տարածքային պաշտպանութեան ուժերը,
- յատուկ նպատակով պատրաստութիւն անցած պահեստազօրային ստորաբաժանումներ եւ մասնագէտներ՝ պատերազմի նոր տիրոյթներում եւ բարդ զինտեխնիկայով գործելու համար,
- համալրման պահեստազօր:

Խաղաղ պայմաններում պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի զարգացումն իրականացւում է պահեստազօրային ուժերի հրամանատարութեան, գործադիր եւ օրէնսդիր մարմինների, տարածքային պաշտպանութեան շրջանում գործող տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպէս նաեւ հասարակական եւ մասնաւոր կազմակերպութիւնների ներգրաւմամբ:

Պատերազմական պայմաններում զօրահաւաքային գործընթացի ամբողջական հրամանատարութիւնն ու կառավարումը անցնում է Գլխաւոր շտաբին:

Պահեստազօրային ուժերի հրամանատարութեան կառուցուածքը կարող է ներառել՝

1. Պահեստազօրային ուժերի հրամանատարութեան շտաբ, որը պատասխանատու է ուժերի նախապատրաստման, զօրահաւաքի ծրագրման եւ բանակավարութեան համար,
2. Քաղաքական, տեղեկատուական, թուային եւ հոգեբանական պատերազմի վարչութիւն, որը պատասխանատու է ոչ-կինետիկ պատերազմի այս ուղղութիւնների կազմակերպման եւ իրագործման համար,
3. Տեսչական վարչութիւն, որը վերահսկողութեան, համապատասխանութեան, չափանիշների մշակման եւ իրաւական հարցերի համար,

4. Տարածքային պահեստազօրային հրամանատարութիւններ, որոնք վերահսկում են ուսումնական կենտրոնները եւ ղեկավարում տեղական պահեստազօրային ուժերը,
5. Պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի ուսումնական կենտրոններ,
6. Ենթակայ ստորաբաժանումներ, ներառեալ պահակային ստորաբաժանումներ եւ վարչական-լոգիստիկ միաւորներ:

4. Խրախուսման համակարգ, անձնակազմի կառավարման միասնական համակարգ

4.1 Պահեստազօրայինի խրախուսման համակարգ

Պահեստազօրայինները կարգավիճակով եւ մտածողութեամբ տարբերուում են գործող զինծառայողներից, նրանք յաճախ ունեն մասնագիտական հմտութիւններ եւ կարողութիւններ արագ զարգացող ոլորտներում, ինչպիսիք են թուային եւ տեղեկատուական անվտանգութիւնը, որոնք ազգային անվտանգութեան համակարգում դժուար է զարգացնել կամ պահպանել: Բացի այդ, շատ պահեստազօրայիններ տարիների մասնագիտական փորձ ունեն արդիւնաբերական կամ այլ բնագաւառներում: Նրանք կարող են մաս կազմել այնպիսի մասնագիտական համայնքների, որոնք կարելի է օգտագործել ճգնաժամի ժամանակ՝ արժէքաւոր գիտելիքի, հաստատական կապերի, մտաւոր ներուժի եւ նորարար լուծումների հասանելիութիւն ապահովելու նպատակով:

Պահեստազօրայինների ներուժի լիարժէք օգտագործումը կարող է զգալի կերպով բարձրացնել ՀՊԱՀ-ի եւ ողջ հայ հասարակութեան դիմակայունութիւնը: Սակայն այդ ներուժը իրական մարտական կամ ռազմավարական առաւելութեան վերածելու համար անհրաժեշտ է յստակեցնել պահեստազօրայիններին ներգրաւելու խրախուսման եղանակները: Որոշների համար դա կարող է լինել մասնագիտական առաջընթաց կամ քաղաքացիական ոլորտում հմտութիւնների զարգացում, իսկ միւսների համար կարճաժամկէտ մարտական հերթապահութեան իրականացման հնարաւորութիւն եւ մարտական պատրաստութեան պահպանում:

Պահեստազօրի համակարգը պէտք է պահեստազօրայիններին առաջարկի սովորելու, ծառայելու եւ կապեր ստեղծելու հնարաւորութիւն՝ ներառեալ նոր հմտութիւնների ձեռքբերում, ազգային պաշտպանութեանը նպաստում եւ համախոհների հետ ընկերային մթնոլորտում լինելու հնարաւորութիւն: Համայնքի մաս կազմելու զգացումը, փոխադարձ վստահութեան եւ յարաբերութիւնների կառուցման հնարաւորութիւնը շատ հզօր խրախուսման գործօններ են: Պահեստազօրային մասնակցութեան ձեւերի բազմազանութիւնն ու համայնքի մաս լինելու գիտակցութիւնը կարող են ներգրաւել այնպիսի մասնագէտների, որոնք այլ պայմաններում չէին դառնայ ՀՊԱՀ-ի գործառոյթների մասնակից:

Անհրաժեշտ է նախագծել մասնագիտական առաջընթացի տարբեր ուղիներ եւ փոխգործակցութեան բազմազան ձեւաչափեր՝ պահեստազօրայինների տարբեր կարողութիւններն ու հետաքրքրութիւնները հաշուի առնելու համար: Պահեստազօրի համակարգը չպէտք է կառուցուած լինի միատարր «մէկ մոդել բոլորի համար» սկզբունքով: Պէտք է մշակուի պահեստազօրայինի կարգավիճակների խելամիտ համադրում, որը կը պահպանի ճկունութիւն եւ անհատական ընտրութեան հնարաւորութիւն, ինչպէս նաեւ Զինուած ուժերի օպերատիւ կարիքներին համապատասխանութիւն: Հնարաւոր է դիտարկել հետեւեալ պահեստազօրային դասակարգերը.

- Հիմնական պահեստազօր (համալրման եւ օպերատիւ պահեստազոր)՝ այն անձինք, ովքեր օրէնքով ենթակայ են պարտադիր պահեստազօրային ծառայութեան եւ Զինուած ուժերի կողմից զօրակոչուում են անհրաժեշտութեան դէպքում:
- Պայմանագրային ակտիւ ծառայութիւն՝ պահեստազօրայիններ, որոնք ժամանակաւորապէս ներգրաւուած են գործող ստորաբաժանումներում՝ պայմանագրային հիմունքով՝ ներառեալ մասնակի աշխատանքային ծանրաբեռնուածութեան եւ վճարովի արձակուրդների հնարաւորութեամբ: Այս մոդելը կարող է կարճաժամկէտ լուծում տալ որոշ ստորաբաժանումներում անձնակազմի պակասի խնդիրներին:
- Մասնակի ակտիւ ծառայութիւն՝ առաւել ճկուն պայմանագրային ծառայութիւն՝ յարմարեցուած կարճաժամկէտ տեղակայման եւ յատուկ օպերատիւ առաջադրանքների համար:
- Պայմանագրային ծառայութիւն՝ յստակ սահմանուած դերերի կամ առաքելութիւնների կատարման համար պայմանագրային հիմքով պահեստազօրայինների ներգրաւում:
- Արտաժամեայ ծառայութիւն՝ կամաւոր մասնակցութիւն պաշտպանական գործողութիւններին ոչ աշխատանքային ժամերին՝ դրամային փոխհատուցմամբ, բայց առանց լրացուցիչ պարտաւորութիւնների:
- Կամաւորներ՝ անձինք, ովքեր ծառայութիւնն իրականացնում են առանց վճարի, բացառութեամբ ուղիղ ծախսերի փոխհատուցման:
- Երկարաձգուած ծառայութիւն՝ հնարաւորութիւն այն պահեստազօրայինների համար, ովքեր ծառայում են ժամանակաւոր ակտիւ պահեստազօրի պայմանագրով, բայց ցանկութիւն ունեն երկարաձգել իրենց ծառայութեան ժամկէտը՝ պահեստազօրի համակարգի կարիքներից ելնելով:

4.2 Անձնակազմի կառավարման միասնական համակարգ

ՀՊԱՀ-ի ռազմավարութեան շրջանակում անհրաժեշտ է ներդնել անձնակազմի կառավարման միասնական համակարգ, որը կը ներառի Զինուած ուժերը, ազգային անվտանգութեան համակարգի այլ գերատեսչութիւններն ու գործակալութիւնները, ինչպէս նաեւ պահեստազօրի համակարգը: Սա պահանջում է փոփոխական կարիերայի մոդելի

որդեգրում, որի շրջանակում պահեստազօրայինները հնարաւորութիւն կը ստանան ներգրաւուել տարբեր զինուորական ծառայութիւններում՝ իրենց մասնագիտական կեանքի տարբեր փուլերում: Ներկայիս համակարգը չափազանց կարծրացած է՝ պահպանելով խիստ բաժանում քաղաքացիական ոլորտի եւ գործող զինուորական ծառայութեան միջեւ: Այս իրավիճակը խոչընդոտում է ՀՊԱՀ-ի շրջանակում Հայաստանի պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի ներուժի լիարժէք օգտագործմանը:

ՀՊԱՀ-ի փոփոխական կարիերայի մոդելը պէտք է հնարաւորութիւն տայ պահեստազօրայինին ճկուն կերպով տեղափոխուել ռազմավարական, օպերատիւ եւ համալրման պահեստազօրի միջեւ, ինչպէս նաեւ ծառայութեան պայմանագրի համաձայն ներգրաւուել ակտիւ ծառայութեան: Համակարգը պէտք է հնարաւորութիւն տայ նաեւ հորիզոնական մուտքի, այսինքն՝ յատուկ ունակութիւններով կամ փորձով որոշ անձինք, պէտք է կարողանան մտնել համակարգ՝ շրջանցելով ամրագրուած ընդունման ընթացակարգերը: Սա թոյլ կը տայ ներգրաւել քաղաքացիական ոլորտի մասնագիտացուած կարողութիւնները՝ տուեալ անձի որակաւորմանն ու փորձին համապատասխան:

Պահեստազօրայինների կարողութիւնների լիարժէք օգտագործման համար պահեստազօրի համակարգում կարիք կը լինի վերանայել զինուորական աստիճանների շնորհման չափանիշները՝ հիմնուած ոչ միայն դասակարգային համակարգի, այլ նաեւ տուեալ դիրքի մասնագիտական պահանջների վրայ: Սա կարող է ներառել զինուորական աստիճանը զուտ գործառոյթից կախուած դարձնելը՝ պաշտպանութեան համակարգում բարձր տեխնիկական կամ փորձագիտական դերակատարում ունեցողների համար ստեղծելով նոր «Մասնագէտ» կարգավիճակ: «Մասնագէտ» կարգավիճակը եւ համապատասխան տարբերանշանը կը նշանակեն լիազօրութիւն որոշակի ոլորտում՝ առանց աւանդական հրամանատարական պարտականութիւնների կամ ռազմական փորձառութեան սխալ մեկնաբանման:

Փոփոխական կարիերայի մոդելով կառուցուած համակարգը պահեստազօրայիններին թոյլ կը տայ ծառայել այնպիսի դիրքերում, որտեղ նրանք կարող են կիրառել իրենց քաղաքացիական հմտութիւնները եւ փորձը՝ առանց կրկնուող կամ ժամանակատար վերապատրաստման անհրաժեշտութեան: Հորիզոնական մուտքի ուղիների զարգացումը կը թեթեւացնի ինտեգրումը համակարգ, կը նուազեցնի ուսուցման եւ յարմարակերպման ծախսերը: Քաղաքացիական հմտութիւնների ճանաչումն ու հաւաստագրումը զինուորական հաստիքի համար էլ աւելի կարագացնի այս գործընթացը:

Պահեստազօրայինների համար յստակ կարգավիճակների ստեղծումը՝ համադրուած ճկուն ծառայութեան պայմանագրերի եւ փոփոխական կարիերայի մոդելի հետ, զգալի կերպով կը խթանի պահեստազօրայինների ներգրաւումը ՀՊԱՀ-ի շրջանակում: Սակայն այս մեխանիզմները պէտք է ամրապնդուեն նաեւ ճկուն եւ ապակենտրոն անձնակազմի կառավարման համակարգով, որն ունակ է համապատասխան մասնագէտներին արագ գտնելու եւ պահեստազօրային ուժերում ներգրաւելու: Այս խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է ՀՊԱՀ-ի համար ստեղծել միասնական թուային հարթակ, որը կունենայ արդիւնաւէտ որոնման գործառոյթներ եւ պահեստազօրայինների ներգրաւման հարթակ՝ ունակ օրերի ընթացքում ներգրաւել անհրաժեշտ մասնագէտներին, այլ ոչ թե ամիսների:

Այս մօտեցման համար օրինակելի մոդել կարող է ծառայել Աւստրալիայի Total Workforce System-ը: Նմանատիպ համակարգի եւ թուային հարթակի ներդրումը յատուկ ուշադրութիւն եւ ծրագրում է պահանջում:

5. Պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի բարեփոխման առաջարկներ

Հայաստանի պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի բարեփոխումը բարդ եւ պատասխանատու գործընթաց է: Այն պահանջում է ոչ միայն ինստիտուցիոնալ վերափոխում, այլեւ ռազմավարական մշակութային շրջադարձ՝ այն հարցում, թե ինչպէս է պետութիւնը մօտենում իր պաշտպանութեան եւ զօրահաւաքային համակարգին: Ընդհանուր առմամբ, բարեփոխումների ջանքը պէտք է կառուցուած լինի մի շարք առանցքային փոփոխութիւնների ուղղութիւնների շուրջ, որոնք համատեղ սահմանում են Հայաստանի համար ժամանակակից, դիմակայուն եւ առաքելութիւն կատարելու ունակ պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի հիմքը:

5.1 Պահեստազօրի համակարգի, պահեստազօրային ուժերի եւ հասարակութեան փոխյարաբերութեան փոփոխումը

Պահեստազօրի համակարգի վերափոխումը կը բերի որակական փոփոխութեան՝ պետական, հասարակական եւ մասնաւոր ոլորտների միջեւ փոխյարաբերութիւններում: Այս գործընթացների կառավարումը կը պահանջի մշակութային փոփոխութիւնների համապատասխան ծրագրի մշակում:

Վերափոխման արդիւնքները կը լինեն հետեւեալը՝

- քաղաքացիական-ռազմական համագործակցութեան շրջանակում պահեստազօրայինների ներգրաւման պաշտօնականացում,
- պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի դերի բարձրացում՝ ճգնաժամի եւ պատերազմի պայմաններում,
- Հայաստանի կենսական ենթակառուցուածքի եւ ռազմավարական բազայի պաշտպանութեան եւ դիմակայունութեան բարձրացում,
- պաշտպանական ոլորտի եւ հայաստանեան հասարակական եւ մասնաւոր ոլորտների միջեւ համագործակցութեան խորացում եւ ընդլայնում,
- պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի դերի եւ գործառոյթների ընդլայնում՝ Հայաստանի ազգային դիմակայունութեան ամրապնդման գործում:

5.2 Պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի դերի ընդլայնումը

Բարեփոխումների գործընթացի շրջանակում անհրաժեշտ է հետազօտել եւ գնահատել կանոնաւոր ուժերին վերապահուած այն մարտական գործառոյթները, որոնք հնարաւոր է

փոխանցել պահեստազօրային ուժերին՝ ուսուցման եւ պատրաստութեան համակարգերում համապատասխան փոփոխութիւններով:

Դրա համար կը պահանջուեն օրէնսդրական փոփոխութիւններ՝ նոր գործառոյթների օրինական ամրագրումն ապահովելու եւ յատկապէս կանոնաւոր ու պահեստազօրային կազմերի միջեւ փոխգործակցութեան ճկունութիւնն ու պարզեցումը խթանելու համար: Ներկայումս Հայաստանի օրէնսդրութիւնն ու վարչական ընթացակարգերը խոչընդոտում են անձնակազմի սահուն տեղաշարժը գործող ծառայութիւնից պահեստազօր եւ հակառակը:

Նոր գործառոյթներին աջակցելու նպատակով պահեստազօրի համակարգը պէտք է կառուցուի կենտրոնացուած պահեստազօրային ուժերի հրամանատարութեան եւ երեք հիմնական բաղադրիչի շուրջ՝ իւրաքանչիւրի համար յստակ սահմանուած դերերով եւ ներքին շարժունակութեան մեխանիզմներով.

- Համալրման պահեստազօր, որը աջակցում է կանոնաւոր Զինուած ուժերին՝ մարտական գործողութիւնների համար վերապատրաստուած անձնակազմ տրամադրելով:
- Օպերատիւ պահեստազօր, որը կազմուած է ինչպէս բարձր պատրաստութիւն ունեցող անհատ պահեստազօրայիններից, այնպէս էլ ճգնաժամային իրավիճակներում եւ զինուած բախումների պայմաններում արագ տեղակայման ունակ ստորաբաժանումներից: Այս ստորաբաժանումները ունակ են իրականացնել մարտական գործառոյթներ, որոնք աւանդաբար վերապահուած են կանոնաւոր ուժերին, եւ դրանց պատրաստութեան մակարդակը պահպանուում է կանոնաւոր ու համալիր վարժական շրջափուլերի միջոցով:
- Ռազմավարական պահեստազօր, որը գլխաւորապէս կազմուած է կամաւոր քաղաքացիներից, որոնք պատրաստակամ են իրենց հմտութիւնները, փորձը եւ գիտելիքը ներդնել ազգային պաշտպանութեան գործում: Թէ եւ այս հատուածը ընդհանուր առմամբ ունի աւելի ցածր պատրաստութեան մակարդակ, այնուամենայնիւ հանդիսանում է առանցքային զսպման տարր, որը պէտք է պահպանուի գործուն վիճակում եւ պարբերաբար ներգրաւուի ազգային դիմակայունութեան աջակցման գործում:

Այսպիսի կառուցուածքի ներդրումը թոյլ կը տայ Հայաստանին առաջ շարժուել դէպի համակցուած ամբողջական ուժերի ձեւաւորում՝ ապահովելով, որ պահեստազօրի համակարգը եւ պահեստազօրային ուժերի բաղադրիչները այլեւս չդիտարկուեն որպէս օժանդակ տարր, այլ լիարժէք ինտեգրուեն ազգային պաշտպանական ճարտարապետութեան մէջ:

5.3 Պահեստազօրայինի ներուժի իրացումը եւ ՀՊԱՀ-ում անձնակազմի կառավարման միասնական համակարգի ձեւաւորումը

Համակցուած ամբողջական ուժերի ստեղծման արդիւնքում, կանոնաւոր եւ պահեստազօրային անձնակազմի տարբերութիւնն աստիճանաբար կը դառնայ առաւել գործառութային, քան կառուցուածքային: Այս փոփոխութեան համար անհրաժեշտ կը լինի ՀՊԱՀ-ում ներդնել անձնակազմի ներգրաւման «խառը» մոդել, որտեղ պահեստազօրայինները, ինչպէս նաեւ որոշ յատուկ հմտութիւններով քաղաքացիական մասնագէտներ, կարող են ժամանակաւորապէս փոխարինել գործող ծառայողներին՝ ելնելով օպերատիւ անհրաժեշտութիւնից: Այսպիսի համակարգը պահանջում է անձնակազմի կառավարման մասնագիտական հմտութիւնների բարձր մակարդակ, յատկապէս՝ ուժերի կազմի, տեղակայման եւ խնդիրների բաշխման վերաբերեալ իրական ժամանակում որոշումներ կայացնելու կարողութիւն: Օպերատիւ եւ ռազմավարական մակարդակներում ստորաբաժանումների հրամանատարները պէտք է լիազօրուած լինեն իրենց կազմերը ձեւաւորել եւ մարտական խնդիրները բաշխել ըստ ունակութեան, ոչ թե կարգավիճակի:

Պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի արդիւնաւէտ օգտագործման համար անհրաժեշտ է անձնակազմի կառավարման բազմաշերտ ինտեգրուած մոդել, որը համապատասխանում է եւ կանոնաւոր, եւ պահեստազօրային ուժերի արդիւնաւէտութեան չափանիշներին, կարողութիւնների զարգացման նպատակներին, օպերատիւ արդիւնքներին: Այս համակարգը պէտք է լինի ապակենտրոն, ճկուն եւ արագ արձագանքող՝ ունակ օրերի ընթացքում ձեւաւորելու որակեալ պահեստազօրային ներուժ: Այս նպատակի իրագործման համար Հայաստանում պէտք է ստեղծուի ՀՊԱՀ անձնակազմի կառավարման միասնական համակարգ, ներառեալ ազգային մակարդակի թուային հարթակ՝ պահեստազօրայինների հմտութիւնները, կարողութիւնները եւ փորձառութիւնը գրանցելու եւ փոփոխութիւններին հետեւելու համար:

Համակարգի առանցքային բաղադրիչներից կը լինի մասնագէտների հարթակը, որը կարող է նոյնականացնել, ներգրաւել եւ ճիշտ պահին ճիշտ առաքելութեան համար առաջադրել համապատասխան կարողութիւններ ունեցող անհատներին: Այս համակարգի արդիւնաւէտ աշխատանքն ապահովելու համար անհրաժեշտ է ներդնել ներգրաւման եւ խրախուսման նոր մոդելներ, որոնք պահեստազօրայինների համար սահուն եւ ճկուն մուտքի հնարաւորութիւններ կը ստեղծեն պաշտպանութեան համակարգի տարբեր մակարդակներում:

ՀՊԱՀ անձնակազմի կառավարման միասնական համակարգը պէտք է առաջարկի՝

- անձնակազմի կառավարման փուլային եւ յարմարակերպուող շրջանակ, որը կարող է յայտնաբերել, ներգրաւել եւ տեղակայել պահեստազօրայիններին ըստ կարողութիւնների եւ փորձ, նաեւ մասնագիտական համայնքները՝ ըստ առաքելութեան եւ ժամանակի պահանջի,

- պարզեցուած եւ համակարգուած ծառայութիւնների փաթեթ՝ ճկուն եւ միաժամանակ չափանիշներին համապատասխան ծառայութեան պայմաններով,
- փուլային մասնագիտական մոդել, որը թոյլ կը տայ պահեստազօրայինին ազատ տեղաշարժուել ՀՊԱՀ համակարգում եւ դրա սահմաններից դուրս՝ ելնելով իր կարգավիճակից եւ պետութեան կարիքներից:

5.4 Պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի ռազմավարական դերի բարձրացումը

Կենսական կարեւորութիւն ունի այն, որ Հայաստանի ռազմական-քաղաքական բարձրագոյն ղեկավարութիւնը լիովին գիտակցի պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի ռազմավարական նշանակութիւնը: ՀՊԱՀ շրջանակում պահեստազօրի բարեփոխման գործընթացի մեկնարկի յստակ եւ հրապարակային հռչակումը ինչնին միջազգային հարթակում կարող է հանդէս գալ որպէս զսպման ազդանշան: Պաշտօնական ուղերձը՝ որ Հայաստանի հանդէպ որեւէ ապագայ ներխուժում կը բախուի պատրաստ եւ կազմակերպուած դիմադրութեան, կը սկսի ազդել հակառակորդների ռազմավարական հաշուարկների վրայ: Ռազմական ուժի ցուցադրութեան հարցում տարածաշրջանային կենտրոնների որակական եւ քանակական գերազանցութեանը հակազդելու համար կենսական է ունենալ երկարաժամկէտ ռազմավարական մրցունակութեան ունակութիւն:

Որպէս զսպման գործօն՝ պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի ընկալումը ենթադրում է այնպիսի ձեւաչափի մշակում, որով հնարաւոր կը լինի հակառակորդի քաղաքական եւ ռազմական ղեկավարութեանը համոզել, որ Հայաստանի պահեստազօրի համակարգը եւ պահեստազօրային ուժերը իրենց ռազմական նպատակների իրագործման համար էական արգելք են հանդիսանում: Պահեստազօրի համակարգը եւ պահեստազօրային ուժերը պէտք է ընկալուեն ոչ թե որպէս պասիւ միջոց, այլ որպէս Հայաստանի պաշտպանութեան առանցքային, գործուն տարր: Հետեւաբար, պահեստազօրի համակարգի ռազմավարական օգտակարութիւնը գնահատելիս պէտք է պատասխանել երկու հիմնական հարցի՝ ի՞նչ իրական ազդեցութիւն կարող են ունենալ Հայաստանի պահեստազօրային ուժերը հակառակորդի վրայ պատերազմի ժամանակ, եւ ի՞նչ գիտի հակառակորդը այդ համակարգի մասին, եւ ինչպէ՞ս կարող է այդ իմացութիւնը ազդել նրա կողմից գնահատուող պատերազմի ելքի ընկալման վրայ:

5.5 Պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի բարեփոխման ռազմավարութեան ուրուագծերը

Հայաստանի պահեստազօրի համակարգի բարեփոխման եւ պահեստազօրային ուժերի արդիականացման ռազմավարութիւնը պէտք է ներառի առանցքային բաղադրիչներ, ինչպիսիք են.

1. Պահեստազօրի համակարգը կիրառել որպէս ՀՊԱՀ ռազմավարական գործիք՝ ուժային կենտրոնների կողմից Հայաստանի նկատմամբ ռազմական ուժի կամ այլ ճնշման կիրառումը զսպելու համար: Սա ենթադրում է պահեստազօրային ուժերի

դերի որակական փոփոխութեան ճանաչում պետական մակարդակով, եւ դրանց ընդգրկում ազգային պաշտպանութեան եւ անվտանգութեան ռազմավարութիւններում, պաշտօնական ուղերձներում եւ հանրային հաղորդակցութեան ծրագրերում:

2. Վերլուծել, թե ինչպէս պահեստազօրի համակարգը՝ ռազմավարական առումով աւելի նշանակալի պահեստազօրային ուժերի ներդրմամբ, կարող է մաշեցնել հակառակորդի առաւելութիւնը ներխուժման վաղ փուլերում: Սա հնարաւոր է տեխնիկական մասնագիտացման, աշխարհագրական առաւելութիւնների օգտագործման եւ նպատակային անձնակազմի ու ստորաբաժանումների պատրաստման շնորհիւ:

3. Ձեւակերպել պահեստազօրային ուժերի կառուցուածքը, գործառոյթները եւ առաջադրանքները, ներառեալ յատուկ նշանակութեան ստորաբաժանումները, որոնք ունակ են գործել պատերազմի եւ աւանդական, եւ նոր տիրոյթներում: Առաջնահերթ ուղղութիւններն են՝

   - Թուային, էլետրամագնիսական, տեղեկատուական եւ հոգեբանական տիրոյթում գործողութիւններ՝ ստեղծելով ոլորտի մասնագէտներից բաղկացած մասնագիտացուած պահեստազօրային ստորաբաժանումներ:

   - Հայկական օդային տարածք մուտքը կանխարգելելու կարողութիւնների զարգացում՝ պահեստազօրային ստորաբաժանումների կողմից ԱԹՍ-ների եւ ՀՕՊ հրթիռային համակարգերի օգտագործմամբ: Այս ստորաբաժանումները պէտք է պատրաստ լինեն անյապաղ մարտական գործողութիւնների, իսկ պահեստազօրայինները պէտք է անցնեն շարունակական մարտական իրական ուսումնական փուլեր:

4. Պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի վերափոխման գործընթացին աջակցելու համար դիտարկել քաղաքացիական հասարակութեան նախաձեռնութիւնները, հարթակները, ոլորտային եւ մասնագիտական միաւորումները: Պահեստազօրային ուժերի համար մարզերում հիմնել ռազմա-տեխնիկական ուսումնական կենտրոններ հետեւեալ գործառոյթներով՝

   - Մարզումներ եւ ուսումանկան վարժանք,

   - Նոր մարտավարութեան եւ նախատիպային սպառազինութեան փորձարկում,

   - Պետական, հասարակական եւ մասնաւոր ոլորտների համագործակցութեան խթանում:

5. Մշակել մեծ տուեալների վերլուծութեան համակարգ, որը ունակ կը լինի չափել պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի պատրաստութեան աստիճանը՝ բարձրացնելով համակցուած ամբողջական ուժերի վստահութիւնը՝ երաշխաւորուած կարողութիւնների առկայութեան նկատմամբ:

Հայաստանի պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի վերափոխումը կը պահանջի դրամական միջոցների ներդրում: Դրամական միջոցների յատկացման առաջնահերթութիւնը պէտք է տալ այն բարելաւումներին որոնք կը յանգեցնեն պահեստազօրային ուժերի մարտունակութեան որակական բարձրացման:

Պատերազմների բնոյթի փոփոխութեան արդիւնքում օրեցօր մեծանում է քաղաքացիական հասարակութեան կարողութիւններին, հմտութիւններին, փորձառութեանը եւ մասնագիտական համայնքներին հասանելիութեան պահանջը: Որպէսզի նման հասանելիութիւնը իրական դառնայ, անհրաժեշտ են փոխակերպումներ՝ եւ մշակութային, եւ ինստիտուցիոնալ մակարդակներում, քաղաքացիական եւ պաշտպանական ոլորտներում, ինչը կը խթանի աւելի լայն հասարակական վերափոխում: Պահեստազօրի համակարգում եւ պահեստազօրային ուժերում անհրաժեշտ է մշակել եւ ներդնել նոր մեխանիզմներ՝ մասնագէտների ներգրաւման եւ հասարակութեան լայն շերտերի մասնակցութիւնը ապահովելու համար: Համակարգը պէտք է դառնայ միջավայր, որը լինելով գրաւիչ՝ նիւթական եւ բարոյական տեսանկիւնից, կը նպաստի ՀՊԱՀ-ի շրջանակում բազմազան կարողութիւնների եւ հմտութիւնների զարգացմանը եւ կապահովի թշնամու յարձակումները զսպելու կարողութիւնը: